10385

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Համբարձում Մաթևոսյան

«29» 09 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 228-.25

Նախաձեռնող՝ *«Բլյու Սենդ» ՍՊԸ*
ք. Երևան, Խորենացու փ., 221/36 փ.

Գործունեություն՝ *Սիփանիկի ԱԿԽ-ի «ԲԼՅՈՒ» հանքերևակման տեղամասում 2025-2027թթ. երկրաբանական ուսումնասիրություն*
Արարատի մարզ, Սիփանիկ բնակավայր

Առդիր՝ 5 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 228-25

«29» 09 2025թ.

Արարատի մարզի Սիփանիկի ԱԿԽ-ի «ԲԼՅՈՒ» հանքերևակման տեղամասում 2025-2027թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Բլյու Սենդ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Մասիս համայնք, Սիփանիկ բնակավայր

Ներածական մաս. «Բլյու Սենդ» ՍՊ ընկերությունը Արարատի մարզի Մասիս համայնքի ավազակոպճային խառնուրդի Բլյու երևակման տեղամասում նախատեսում է իրականացնել 2024-2027թթ. ընթացքում երկրաբանական ուսումնասիրություն: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 2-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Աշխատանքների համար ընտրված տարածքը ներառված է Մասիս խոշորացված համայնքի Սիփանիկ բնակավայրի վարչական սահմաններում:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով վարձակալված հայցվող տարածքի հողերը հաշվառված են որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հողեր (03-085-0027-0075 ծածկագրով) հողատեսքով՝ այլ հողեր:

Նկարագրական մաս. Արարատյան հարթավայրի սահմաններում լայն տարածում ունեն միջին-վերին չորրորդականի և երկրորդ դարավանդների լճա-ալյուվիալ, ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքների հորիզոնները և Արաքս ու Սևջուր գետերի հնահունային առաջացումները, որոնց հզորությունը հասնում է մինչև 100-120 մ-ի: Դրանք ներկայացված են հիմնականում ավազակոպճային կուտակումներով, ավազներով, ավազային ու դիատոմիտային կավերով: Բուն հայցվող երևակման տարածքում մակերևույթի բացարձակ բարձրությունները տատանվում են 827.7-828.9 մ սահմաններում, հետախուզման ստորին սահման է ընդունվել 805 մ հորիզոնը:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Մակերևույթից օգտակար հաստվածքը ծածկված է ժամանակակից բերվածքային առաջացումներով՝ աղուտ-ալկալի կավային հողերով, կավավազային զանգվածով: Ժամակակից առաջացումների ընդհանուր հզորությունը կազմում է մինչև 2.5 մ, որից աղուտ-ալկալի հողերը՝ 0.35 մ:

Սիփանիկի ավազակոպճային խառնուրդի երևակման «Բլյու» տեղամասը վարչական տեսակետից գտնվում է Արարատի մարզի Մասիսի տարածաշրջանում և ներառված են խոշորոցված համայնքի Սիփանիկի սահմաններում: Հայցվող տեղամասը գտնվում է ազդակիր Սիփանիկ գյուղից 3.77 կմ հեռավորության վրա: Հովտաշատ գյուղի մոտակա բնակելի տարածքները գտնվում են երևակման տարածքից 0.89 կմ, Սայաթ-Նովա գյուղի բնակելի տարածքները և արտադրական-արդյունաբերական շինությունները՝ 0.96 կմ, Մասիս քաղաքի արդյունաբերական գոտին՝ 1.1 կմ, Սիս գյուղի բնակելի շինությունները՝ 110 մ հեռավորությունների վրա: Մոտ 100 մ հեռավորության վրա է գտնվում Սիս բնակավայրի գերեզմանատունը: S-2-9 տեղական նշանակության ավտոճանապարհն անցնում է տեղամասի արևմտյան սահմանից 54-415 մ հեռավորության վրա, 95 մ հեռավորության վրա, դեպի հարավ անցնում է ՀԿԵ Երևան-Արարատ ուղղության երկաթգիծը, ճկնաբուծական տնտեսությունը գտնվում է հայցվող տարածքից 35-61 հեռավորությունների վրա: Հայցվող տարածքի կոորդինատներն ըստ ArmWGS-84 համակարգի՝

	X	Y
1.	4437803.6402	8446416.3428
2.	4437565.8617	8447053.2263
3.	4437341.9946	8447057.2823
4.	4437204.2313	8447094.1192
5.	4437202.8917	8447342.3306
6.	4436945.4419	8447337.6368
7.	4436974.6777	8447075.0124
8.	4436970.9628	8446751.9027
9.	4437119.7833	8446733.2039
10.	4437333.0274	8446685.1982
11.	4437359.9273	8446214.8191
1.	4437803.6402	8446416.3428

«Բլյու» տեղամասից 57-ից 627մ հեռավորության վրա հոսում է Հրազդան գետը: Հայցվող տեղամասի շրջանում են գտնվում Արարատյան ոռոգման-դրենաժային համակարգի մաս կազմող 2-րդ և 3-րդ կարգի ջրանցքները: Ջրանցքը գտնվում է հայցվող տեղամասից համաձայն հաշվետվության՝ 9.1 մ-ից 403 մ հեռավորությունների վրա:

Ըստ էության, օգտակար հանածոն հետախուզվող տեղամասում ներկայացված է հորիզոնական կամ հորիզոնականին մոտ տեղադրված շերտաձև մարմնի տեսքով: Ավազակոպճային կուտակում ավազային և կոպճային ֆրակցիաները բաշխված են անկանոն: Խճաքարային բաղադրիչը ներկայացված է ամուր հրաբխային, ավելի հազվադեպ՝ նստվածքային և մետամորֆային ապարների կլորավուն, հղկված

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

կտորներով: Գերակշռում է 10-40 մմ ֆրակցիայի խճագլաքարային զանգվածը:
Երևակման տարածքի երկրաբանական կառուցվածքի ճշտման, քարտեզագրման նպատակով նախատեսվում է մոտ 46.5 հա մակերեսով տարածքում կատարել երկրաբանահանութային աշխատանքներ: Երևակման երկրաբանական քարտեզի կազմման համար անհրաժեշտ երկրաբանական երթուղիների ընդհանուր երկարությունը կկազմի մոտ 5490 մ: Օգտակար հանածոյի մարմնի եզրագծման, ուսումնասիրման և նմուշարկման նպատակով նախատեսվում է 28 հետախուզական հորատանցքերի հորատում պտուտակրչային (շնեկային) եղանակով ЗИЛ 131 ИА УРБ 2а2 մակնիշի հորատման հաստոցով: Պտուտակրչի տրամագիծը ընդունվում է 170մմ: Հիմք ընդունելով տարածքի երկրաբանական կառուցվածքի վերաբերյալ ֆոնդային տվյալները՝ նախագծվող հորատանցքերի խորությունը կազմում է 700գծ.մ: Հորատման 28 հարթակների կառուցման ժամանակ ենթակա է հանման և կուտակման մոտ 343 խմ հողային զանգված, ինչը հորատման աշխատանքների ավարտից հետո հետ է փոխվելու հորատման հարթակի տարածքում, կատարվելու է ռեկուլտիվացիա: Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա է բոլոր հորատանցքերից ստացված հորատահանուկը:

Պատճառաբանական մաս. Հետախուզական հորերի անցման ժամանակ կատարվելու է այդ տիպի հողերի խախտում՝ հորատման հարթակների 980 քմ տարածքում: Ընդհանուր առմամբ խախտվելու է 343 խմ հողային զանգված, որը հեռացվելու է հարթակի մակերևույթից նախքան հորատման աշխատանքների մեկնարկը: Հողային զանգվածը կուտակվելու է անմիջապես հարթակի հարակից տարածքում, իսկ փաստագրման և նմուշարկման աշխատանքների ավարտից հետո ամբողջությամբ օգտագործվելու է ռեկուլտիվացիոն աշխատանքների ընթացքում: Տեղամասի տարածքում նոր ճանապարհների շինարարություն չի նախատեսվում, հողերի օտարում ճանապարհների համար չի պահանջվում: Աշխատանքների այս փուլում տեղամասում նախատեսված չէ արտադրական հրապարակի շինարարություն, հողերի օտարում այս նպատակով նույնպես չի կատարվելու: Երկրաբանական ուսումնասիրության բացասական ազդեցությունը տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է, քանի որ հորատման հարթակների տարածքում խախտվող հողային շերտը վերականգնվելու է անմիջապես նմաշարկման և փաստագրման աշխատանքներից հետո: Համաձայն հաշվետվությամբ ներկայացված կոորդինատների՝ գործունեության տարածքում կարող են հանդիպել բույսերի Կարմիր գրքում գրանցված Հիրիկ մուսուլմանական-Iris musulmanica Fomin և կենդանիների Կարմիր գրքում գրանցված՝ Վարդագույն հավալուսն- Pelecanus onocrotalus Linnaeus, Ծվվան սագ- Anser erythropus և Մարգագետնային ծիծառակտցար- Glareola pratncola տեսակները: Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների պահպանության նպատակով ընկերությունը պարտավորվում է իրականացնել բնապահպանական միջոցառումները: **Կենսաբազմազանության պահպանության նպատակով տեսակի չուի, բույսերի ծաղկման ժամանակաշրջանում, դաշտային աշխատանքները նախատեսվում է դադարեցնել, բացառել անհանգստացնող գործոնները՝ աղմուկը, մարդկանց և տեխնիկայի առկայությունը տեղամասում**:

Երկրաբանահետախուզական աշխատանքների տեխնոլոգիական գործընթացը բացառում է ագրեսիվ նյութերի կիրառումը, չեն նախատեսվում նաև հորատապայթեցման աշխատանքներ: Աշխատանքների ընթացքում կիրառու

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

արտանետումները և աղմուկի, թրթռումների մակարդակը գտնվում են թույլատրելի սահմաններում, արտադրական արտահոսքեր, վտանգավոր թափոններ տեղամասի տարածքում չեն առաջանալու, հետևաբար ավազակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության արդյունքում բնակչության առողջության վրա ազդեցություններ չի կանխատեսվում: Կենցաղային թափոնները կկուտակվեն տեղամասի տարածքում՝ աղբի տարողություններում, այնուհետև մասնագիտացված ընկերության կողմից կհեռացվեն:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք թույլ կտան նվազեցնել ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Փորձաքննական գործընթացին մասնակից է նաև ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտը, որի տրված կարծիքի համաձայն՝ Արարատի մարզի Սիփանիկի ԱԿԽ երևակման «Բլյու» տեղամասում երկրաբանական ուսումնասիրությունների իրականացման համար ավազանի որակական և քանակական պարամետրերը ճշտելու և հետագայում դրանք արդյունահանելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել տեղամասի գտնվելու վայրը և առկա ջրանցքների՝ տեղանքին շատ մոտ գտնվելը (10-18 մ), քանի որ հետագայում իրականացվելիք արդյունահանման աշխատանքները անմիջականորեն կազդեն Հրազդան գետի էկոհամակարգի վրա:

Համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի «Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին» N1909-Ն որոշման հավելվածի 5-րդ գլխի 19-րդ կետի 4-րդ ենթակետի «Էկոտոնի տարածքներն ընդգրկում են գետերի, լճերի, լճակների, բնական ջրագոյացումների խոցելի ջրամերձ և ափամերձ հատվածները: Էկոտոնի տարածքները սահմանվել են մինչև 150 մետր շառավղով հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի N 64-Ն որոշմամբ սահմանված չափանիշները Հրազդանի ՋԿՏ-ում տարանջատվել է 9 տարածք: Հայցվող տարածքի մի մասը գտնվում է վերոնշյալ կառավարության որոշման հավելվածի 5-րդ գլխի աղյուսակ. 22-ի 5-րդ կետի տարածքում (Հրազդան գետի ակունքներ, ճահիճներ):

Հայցվող տարածքը հարակից է այդ տարածքով անցնող ցամաքուրդային համակարգին: Համաձայն Ջրային օրենսգրքի՝ ցամաքուրդային (դրենաժային) համակարգը, դա գրունտային ջրերի մակարդակն իջեցնող և դրանց հեռացման համար անցկացվող բաց ջրանցքների, փակ ցամաքուրդների (դրենաժների), չորացման հորերի և համապատասխան ՀՏԿ-ների համակարգ է:

** Երկրաբանահետախուզական աշխատանքների համար տրված սույն եզրակացությունը չի կարող հիմք հանդիսանալ հետագայում Ընկերության կողմից ներկայացվող արդյունահանման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական փորձաքննական եզրակացության ստացմանը:*

Փորձաքննական պահանջներ

- Կենսաբազմազանության պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշմամբ՝ սահմանված դեպքերում իրականացնել ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումները:

- Ապահովել մշտադիտարկումների իրականացումը՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի՝ «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշման համաձայն:
- Արարատյան ոռոգման-դրենաժային համակարգի մաս կազմող 2-րդ և 3-րդ կարգի ջրանցքների անօտարելի գոտիների տարածքները պահպանել մինչև 10 մետր երկարությամբ՝ ապահովելով ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20 «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշման պահանջները:
- Մինչ աշխատանքների իրականացումը Արարատյան ոռոգման-դրենաժային համակարգի մաս կազմող 2-րդ և 3-րդ կարգի ջրանցքները տնօրինող և սպասարկող կազմակերպություններից ստանալ անհրաժեշտ համաձայնեցումները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Արարատի մարզի Սիփանիկի ԱԿԽ-ի «ԲԼՅՈՒ» հանքերևակման տեղամասում 2025-2027թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Շուշանիկ Կարապետյան